**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան **18.10.2019թ. ժամը 19:45**

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,

- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Մ.Ամիրյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին***

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **03.10.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն «**Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, իսկ «Գլոբմեդ» ՍՊԸ-ն՝ ունի 6000 հհ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը սակայն չի գերազանցում օրենքով նախատեսված շեմը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

**Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):**

01.10.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

«Գլոբմեդ» ՍՊԸ ի կողմից ընթացակարգի հրավերի հավելված N 3.1-ով ներկայացված 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքատեսակների հետ առաջարկվել է գծային տվիչների 2 տեսակ, որոնցից մեկը՝ 75L38P համապատասխանում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, իսկ 2-րդը՝ 7L4P, ոչ:

Համաձայն գնման հայտը նախագծող անձի կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության 7L4P գծային տվիչը ավելի ժամանակակից է և դրա կիրառման դեպքում պատկերի վիզուալիզացիայի մակարդակը ավելի բարձր է: Հաշվի առնելով վերոնշյալը գնահատող հանձնաժողովը որոշեց նշված տվիչը համարել հրավերով պահանջվող տվիչին համարժեք:

Իսկ 6 րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում Պուլսօքսիմետրի չափվող պարամետրերում սրտի բաբախումների ճշտությունը նշված էր +/- 1 բ/ր կամ +/-2%, սակայն տվյալ պարամետրերի մեծությունը պետք է հստակ նշվեր:

«Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ ի կողմից ընթացակարգի հրավերի հավելված N3.1-ով ներկայացված 7-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում Պուլսօքսիմետրի չափվող պարամետրերում սրտի բաբախումների ճշտությունը նշված էր +/- 1 բ/ր կամ +/ 1%, ինչպես նաև դիսփլեյով և սեղմակոճակներով հագեցված պուլտի ֆիզիկական բնութագրերը ևս հստակ չէին ներկայացված:

Սակայն վերոնշված պարամետրերի մեծությունը պետք է հստակ նշվեր մասնակցի կողմից:

11.10.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրեց նիստը և գնումների համակարգողը ծանուցեց մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը /14.10.2019թ.-16.10.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում ուղարկել են պահանջվող փաստաթղթերը:

«Գլոբմեդ» ՍՊԸ ն ոչ թէ հստակեցրել է Պուլսօքսիմետրի չափվող պարամետրերում սրտի բաբախումների ճշտությունը, այլ ներկայացրել է մեկ այլ ապրանքի տեխնիկական բնութագիր:

Համաձայն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետի, հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

Սակայն «Գլոբմեդ» ՍՊԸ-ն հավելված N 3.1-ի փոխարեն ներկայացրել է հրավերով նախատեսված ձևաչափին չհամապատասխանող տեղեկատվություն, մասնավորապես.

-ներկայացված ֆայլում բացակայում է /*Հավելված 3.1, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13» ծածկագրով գնանշման հարցման հրավերի*/ արտահայտությունը:

-հրավերի Հավելված 3.1-ում նշված է. «...առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող **ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական** բնութագրերը», **իսկ մասնակիցը ներկայացրել է.** «... առաջին տեղը զբաղեցրած մասնակից ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հստակեցված տարբերակը»:

Ինչպես նաև հրավերի Հավելված 3.1-ով նախատեսված աղուսակը կազմված է վերնշյալ պահանջներին համապատասխան /աղուսակը բաժանված է առաջարկվող ապրանքի **անվանման, ապրանքային նշանի, արտադրողի անվանման, ծագման երկրի և տեխնիկական բնութագրի** համար նախատեսված սյունակների/ սակայն «Գլոբմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աղուսակում բացակայում են առաջարկվող ապրանքի **ապրանքային նշանի, արտադրողի անվանման և ծագման երկրի** համար նախատեսված սյունակները, ներկայացված է միայն ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

«Գլոբմեդ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերի Հավելված 3.1-ի շտկված տարբերակը՝ որտեղ հստակ նշվում է առաջարկվող ապրանքի **ապրանքային նշանի, արտադրողի անվանման և ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը, այլ շտկել է ապրանքի** տեխնիկական **բնութագրի տեքստային հատվածը:**

Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գլոբմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աղուսակով ապրանքի Անվանումը դաշտում գրված /Պուլսօքսիմետր դյուրակիր SA 101 Fazzini Italy/ տեղեկատվությունից պարզ է դառնում **առաջարկվող** ապրանքի անվանումը, **ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և ծագման երկիրը, որոշեց «Գլոբմեդ ՍՊԸ-ի կողմից** ներկայացված **փաստաթուղթը համարել շտկված:**

1.2 18.10.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Գլոբմեդ» ՍՊԸ-ի և «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի որակավորման չափորոշիչները գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, վերջիններիսիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ, **1-6**-րդ չափաբաժնի մասով՝ **«Գլոբմեդ» ՍՊԸ**, 7-րդ չափաբաժնի մասով՝ **Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ**, և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ.Ամիրյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/13»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվա ժամը 17:10-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | | Ա.Նազարյան |
| **Գնահատող** | | Վ.Վահանյան |
| **Գնահատող** | | Գ.Անտոնյան |
| **Գնահատող** | | Հ.Ավետիսյան |
| **Գնումները համակարգող** | | Մ.Ամիրյան |